


Ինչ պետք է Ռուք իմանաք այս մասին

ՇԱԳԱՆԱԿԱԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՂ



Մեր համայնքների առողջապահության կազմակերպումն
ավելի հեշտ է համատեղ աշխատելով:



Ի՞նչ գիտենք շագանակագեղձի քաղցկեղի մասին


1. Շագանակագեղձի քաղցկեղն այսօր տղամարդկանց մոտ առավել հաճախ հանդիպող քաղցկեղն է: Յուրաքանչյուր հինգ տղամարդուց մեկն իր կյանքի ընթացքում ձեռք է բերում շագանակագեղձի քաղցկեղ:
2. Ամեն տարի ավելի քան 41000 տղամարդ է մահանում շագանակագեղձի քաղցկեղից: Շագանակագեղձի քաղցկեղը հայտնաբերելու ու այն բուժելու լավագույն միջոցներն օգնում են շագանակագեղձի քաղցկեղով հիվանդ տղամարդկանց ապրելու ավելի երկար:
3. Եթե շագանակագեղձի քաղցկեղը հայտնաբերվել է վաղ, ապա բուժումն ավելի լավ է օգնում:

Ի՞նչ է շագանակագեղձը

Շագանակագեղձը սեռական գեղձ է, որն արտադրում է սերմը տեղափոխող սերմասեղուկը:

Որտե՞ղ է գտնվում շագանակագեղձը?

Շագանակագեղձը գտնվում է աղիքի առջևում եւ շրջապատում է սիզուկը խողովակ, որը սիզապարկից տեղափոխում է մեզը (տես Պատկեր #1):



Պատկեր #1

Ո՞վ է ռիսկի ենթակա

Բոլոր տղամարդիկ ենթակա են
շագանակագեղձի քաղցկեղ ստանալու ռիսկի

Դուք ավելի մեծ ռիսկի եք ենթակա, եթե Դուք.

- Աֆրիկա-Ամերիկացի եք
- 65-ից ավելի տարիք ունեք
- ուտում եք շատ յուղոտ սննդամթերք
- երկար ժամանակ աշխատել եք էլեկտրատեղակայման եւ գալվանատեխնոլոգիայի մեջ եւ ենթարկվել եք կադմիում անվանումով մետաղի ազդեցությանը
- ունեք շագանակագեղձի քաղցկեղի ընտանեկան պատմություն

Շագանակագեղձի քաղցկեղ ունեցող տղամարդկանց մեծ մասը չի ունենում ռիսկի հայտնի գործոններից եւ ոչ մեկը: Հիշե՛ք. բոլոր տղամարդիկ շագանակագեղձի քաղցկեղ ստանալու ՌԻՍԿԻ ԵՆԹԱԿԱ ԵՆ:

Որո՞նք են շագանակագեղձի քաղցկեղի
նախազգուշացնող նշանները

Շագանակագեղձի քաղցկեղը հաճախ
նախազգուշացնող նշաններ ՉԻ ունենում , բայց եթե
Դուք ունեք հետեւյալ պրոբլեմներից որեւէ մեկը, ապա
անմիջապէս դիմեք Ձեր բժշկին կամ այցելեք կլինիկա.

- Դուք ունեք մեզի դանդաղ կամ ընդհատվող հոսք
- Դուք ունեք մեզի հոսքի սկսվելու կամ ավարտվելու
դժվարություն
- Դուք ունեք հաճախամիզություն եւ առավելապէս
գիշերները
- Ձեր մեզում արյուն կա
- Դուք ունենում եք ցավեր կամ այրոցք, երբ միզում եք
- Դուք ունենում եք ցավ, որը տարածվում է դեպի մեջքի
ներքելը, կոնքը կամ ազդրերը

ՀԻՇԵՔ.

Եթե Դուք ունեք այս պրոբլեմներից որեւէ մեկը,
ապա անմիջապէս հայտնեք Ձեր բժշկին կամ
կլինիկա:

Ինչպե՞ս է հայտնաբերվում շագանակագեղձի
քաղցկեղը

Ձեր բժիշկը կարող է գտնել շագանակագեղձի
քաղցկեղը շոշափելով Ձեր ուղիղ աղիքը իր մատներով:
Դա կոչվում է ուղիղ աղիքի հետազոտություն: Ձեր
բժիշկը կարող է վերցնել որոշ քանակի արյուն
եւ նրանով ստուգել շագանակագեղձի քաղցկեղի
նշանները: Սա կոչվում է արյան ՇՀՀ(PSA) ստուգում
(շագանակագեղձի հատուկ հակագեն):

Ե՞րբ պետք է ես ստուգվեմ իմ բժշկի կողմից
շագանակագեղձի քաղցկեղի համար

50 կամ ավելի տարիք ունեցող յուրաքանչյուր
տղամարդ պետք է դիմի իր բժշկին կամ կլինիկա
քննարկելու ուղիղ աղիքի ամենամյա հետազոտման եւ
արյան ՇՀՀ(PSA) ստուգման անհրաժեշտությունը:

Ռիսկի գործոններ ունեցող երիտասարդները պետք է
գրուցեն իրենց բժշկի հետ շագանակագեղձի քաղցկեղի
մասին:

Ին՞չ կլինի, եթե բժիշկը կարծում է, որ ես կարող է
շագանակագեղձի քաղցկեղ ունենա

Եթե հետազոտության կամ արյան ստուգման
ընթացքում բժիշկը ինչոր բան է հայտնաբերում,
ապա նա կարող է ուզենալ ավելի շատ ստուգումներ
անել: Այդ ստուգումների մի մասը կարող է ընդգրկել
ռենտգեն, ուլտրաձայնային կամ արյան ավելի շատ
տեսակի ստուգումներ : Բժիշկը կարող է ուզենալ
վերցնել շագանակագեղձի շատ փոքր կտոր եւ այն
դիտել մանրադիտակով: Սա կոչվում է բիոպսիա:

ՀԻՇԵՔ.

Եթե Ձեր բժիշկը ցանկանում է կատարել էլի ինչոր
ստուգումներ, ապա գնացեք տեսակցելու նրան, երբ
նա կկանչի Ձեզ:

Դուք կարող է չունենաք շագանակագեղձի քաղցկեղ,
բայց Դուք կարիք ունեք իմանալու այդ մասին:

Ինչ կլինի եթե ստուգումները ցույց են տալիս, որ ես ունեմ շագանակագեղձի քաղցկեղ

Եթե ստուգումները ցույց են տալիս, որ Դուք ունեք շագանակագեղձի քաղցկեղ, ապա Ձեր բժիշկը Ձեզ կտեղեկացնի լավագույն եղանակների մասին նորից լավ զգալու համար: Շագանակագեղձի քաղցկեղի բուժումը կարող է ընդգրկել վիրահատություն կամ քաղցկեղի դեմ պայքարելու տարբեր դեղորայքների կիրառում (քիմաթերապիա): Դուք եւ Ձեր բժիշկը կարող եք որոշել, թե որն է Ձեզ համար լավագույնը:

ՀԻՇԵՔ.

Շագանակագեղձի քաղցկեղը հաճախ հաջողությամբ բուժվում է, եթե այն հայտնաբերվել է վաղ:

Վաղ շրջանի շագանակագեղձի քաղցկեղը կարող է նախազգուշողական եւ ՈՉ մի նշան չունենալ:

Շագանակագեղձի քաղցկեղը կարող է վաղ հայտնաբերվել շագանակագեղձի կանոնավոր հետազոտությունների դեպքում:

Դուք եւ Ձեր առողջությունը կարելուք են: Կատարեք շագանակագեղձի կանոնավոր ստուգումներ, քանի որ Դուք կարելուք եք Ձեր ընտանիքի, Ձեր ընկերների եւ Ձեր համայնքի համար:

Բառացանկ

Բիոպսիա. Վիրահատական եղանակով հյուսվածքի փոքրիկ կտորի հեռացում քաղցկեղային բջիջների առկայությունը նրանում մանրադիտակային հետազոտությամբ ստուգելու համար: Բիոպսիան քաղցկեղի ախտորոշման համար ամենակարեւոր պրոցեդուրան է:

Միզապարկ. Մարդու կամ կենդանիների մարմնի ներսում գտնվող մաշկային պարկ, որի մեջ հավաքվում է ոչ պետքական հեղուկը մինչ փոխանցվելը միզուկին խողովակ, որը մեզը տեղափոխում է միզապարկից (տես պատկեր #2):

Կադմիում. Կապտա-սպիտակավուն մետաղ, որն օգտագործվում է որպես պարզագույն միջոց մետաղական օբյեկտները պաշտպանիչ մակերեսային երեսպատելու համար:

Քիմիաթերապիա. Որոշ հիվանդությունների, այդ թվում քաղցկեղի, մշակումը դեղերով:

Գեղձ. Մարմնի օրգան, որն արտադրում է մարմինը արտազատվող կամ արյան մեջ ներգատվող հեղուկ:

Շագանակագեղձ. Տղամարդկանց միզապարկի ներքեւում գտնվող գեղձ (տես պատկեր #2):


Ուղիղ աղիքային հետազոտություն. Բժշկի կողմից կատարվող ստուգում՝ շագանակագեղձը ուղիղ աղիքի ներսից մատնելով շոշափելու միջոցով (տես պատկեր #2): Անվանվում է նաեւ Ուղիղ Աղիքային Թվային (նշանակում է «մատ») հետազոտություն:

Ռիսկի Գործոն. Հանգամանք, որը մեծացնում է մարդու՝ քաղցկեղի տիպի որեւէ հիվանդություն ձեռք բերելու հնարավորությունը: Օրինակի համար, թոքերի հիվանդության ռիսկի գլխավոր գործոնը ծխելն է: Շագանակագեղձի քաղցկեղի ռիսկի գործոնը 65-ից ավելի տարիքն է:

Մերմ. Տղամարդու սեռական օրգանների արտադրած բջիջ, որը սովորաբար լողում է սերմասեղուկի մեջ եւ ընդունակ է միավորվելու կնոջ ձվաբջիջի հետ ու նոր կյանք ձեւավորելու:

Ուլտրաձայն. Բարձր հաճախականության ձայնային ալիքների կիրառում մարմնի ներսի ուռուցքները հայտնաբերելու համար: Կոչվում է նաեւ ուլտրասոնոգրաֆիա:

Միզուկ. Խոռոչակ, որը մեզը տեղափոխում է միզապարկից (տես պատկեր #2):



Պատկեր #2

Original Text by:

Niccu Tafarrodi, Ph.D.
Donald Whipple Fox

Original Text Edited by:

Cesar Ercole, M.D.
*Assistant Professor
University of Minnesota*

David V. Taylor, Ph.D.
*Dean of the General College
University of Minnesota*

Illustrations by:

Nickdokht Torkzadeh
Nickdokht is a native of Tehran, Iran. She is a Graphic Designer at the University of Minnesota where she earned her MA from the School of Architecture. Her field of work is design, layout and graphics for print and interactive media.

Translated & Modified by:

Anna Yesaybegyan, Ph.D.
Anna is a native of Armenia, where she graduated from the Academy of Science. She is the Executive Director of All In One – Translation Agency in Minneapolis, MN. She has developed 30 publications on Translation Theory.



This booklet was created in partnership
with the American Cancer Society.